

ՄԵԼԻ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարեկան 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից)

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
խաղաղապարտութիւն 2 կոպեկով.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պաշտօնական խրատ.—ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Գաղափար զեռ մեծ է. Կայ և մի այլ միջոց.
Նամակ Եւրոպայ. Նամակ խմբագրութեան. Ներ-
քին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատե-
րազմ. Նամակ Ամերիկայից. Արտաքին լուրեր.—
ՀԵՆՈՒԹԻՒՆԵՐ. ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ.—ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Թիֆլիսից. Որբանոց-
ներ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԽՐԱՏ

Սթափեցնող տպաւորութիւն է թող-
նում Անդրկովկասեան երկաթուղու կառա-
վարի շրջաբերական անանուն և ան-
ստորագիր նամակների վերաբերմամբ:
Ջանազան անձինք, կամ առանց ստորա-
գրութեան, կամ ծածկվելով երկաթուղու
ծառայող ստորագրութեան տակ ուղար-
կում են անթիւ նամակներ և մատու-
թիւններ թէ երկաթուղու վարչութեան
և թէ երկաթուղային դեպարտամենտին,
հաղորդելով անդեղութիւններ այս և այն
անձի, այս և այն գործի մասին: Անանուն
նամակները անարգել կերպով ստուեր են
զոյում իրանց հակակրեկի մարդկանց վրա
և մի և նոյն ժամանակ ազատ են մնում
անձնական պատասխանատուութիւնից, ի-
րանց հաղորդած մեծ մասամբ սուտ լու-
րերի համար: Իր պատիւը բարձր պահող
ամեն հիմնարկութիւն ունի իր արձանագ-
րութեան վրա «Հաղորդագրութիւնների» վրա,
համազօր լինելով, որ այդ եղանակով ա-
ռաջ են մղվում մեծ մասամբ խտրողներ,
անձնական հաշիւներ և վրէժխնդրութիւն:
Եւ ահա Անդրկովկասեան երկաթուղու
գլխավոր վարչութիւնը յայտնում է, որ
անանուն նամակները կը թողնվեն առանց
կարգաւու և կոչնչացնելու: Նա շեշտում
է, որ հաղորդակցութեան ճանապարհների
միջոցով իրականացնող երկաթուղու վարչութիւնը,
յայտնելով այդ մասին բոլոր իրանց ստո-
րագրութիւններին, առաջարկում են յայտնել
ամեն տեղ պաշտօնագրէս, որ անանուն
զրուածքները պէտք է մնան միանգամայն
անհետանալ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԵՂԱՐԱՆ

Կ. ՊՕԼԻՆ, յունիսի 15-ին

Թղթակցութիւն կարդալով՝ գիտեմ որ առա-
ջին անգամ պիտի ըսեմ.—է՛հ, ալ ձանձրացնալ
սա Կիլիկիոյ խնդիրն... Սակայն բուն այս
խնդիրն անգամ հրատարակ է այսօր և այնքան
զորեւն մէջտեղիւն հանգոյցներով, որ մինչ-
դեռ ծախված գրիչներ, parasite-ներ՝ պարա-
զայէն օգուտ քաղելով, խնդիրն իրենց ուզած
զոյնով կուզեն ներկել, հարկ է որ բուն ճշմար-
տութիւնն յերևան գայ: Մշակիչ սրբանայիններ
մէջ, ապագային իբրեւ դօկումէնտ, որպէս զի
կըզեն իրաւին հետ չի խառնուի, կամ, ինչպէս
կըզեն գաղղիացիները՝ ne pas mêler le sacré
avec le profane: Բայց և այնպէս Կիլիկիոյ կա-
թոլիկոսական խնդրին համար ներկայ թղթակ-
ցութիւնն, ինչպէս պիտի երևի ի ստորեւ, եթէ
վերջինն ալ չը լինի, կարծեմ թէ վերջինները
պիտի կրնայ համարուիլ, վասն զի ալ ծայրը
ծայրին հասած է:

Անցեալ թղթակցութիւնով ծանուցած էի թէ
ինչպէս Առաջնայի կուսակալ Պաշիկ վաշան, իր
կուսակալանիստ քաղաքին մէջ, հայոց երեսններէն
Աղլային ժողով մը ձևացուցած, և իր ուզած

Այս գեղեցիկ շրջաբերականը անկեղծ
ուրախութիւն կը պատճառի ոչ միայն եր-
կաթուղային ծառայողներին, այլ և առ-
հասարակ այն բոլոր անձանց, որոնք զգու-
շե են համարում զարտնի զրպարտութիւն-
ների սխառմը: Ոչ ոք չէ արգելում, որ
նա իր ստորագրութեամբ, արձակ համար-
ձակ, մերկայեն այս և այն գեղծումը և
զանցառութիւնը: Դա քաղաքացիական
քաջութիւն է, լուրջ գէպերում նոյն իսկ
հերոսութիւն: Այդպիսի գէպերում յայտ-
նի են մեղադրողը և լեզուաբարձը. այդ-
տեղ միջոց է տրված փաստերով, ապա-
ցոյցներով թէ մեղադրել և թէ պաշտ-
պանել: Մենք կարծում ենք, որ հաղոր-
դակցութեան ճանապարհների միջոցով
թեան և նրա օրգանների ընդունած այս
ձեւը պէտք է պարտաւորեցուցի զառնայ
բոլոր հասարակական հաստատութիւնների
և հիմնարկութիւնների համար: Օրինակ,
լուր լինել, որ ինչու, մեր քաղաքա-
յին ինքնավարութիւնների պաշտօնական
ներկայացուցիչները, քաղաքագլուխները
նոյնպէս յայտարարեն, որ բոլոր անանուն
գրութիւնները միշտ և ամեն ժամանակ
կը մնան առանց հետեւեցի: Կարծում ենք,
որ Թիֆլիսի ինքնավարութիւնը, իբրեւ
անդրանիկ մեր երկրում, կարող էր իր
վրա վերցնել այդ նախաձեռնութիւնը,
մանաւանդ այն պատճառով, որ հասարա-
կութեան մէջ զանազան, գուցէ անհիմ-
ն լուրեր են պատուած, որ անդադար անա-
նուն գեղեցուցիչներ և նամակներ են տե-
ղում թէ ծառայողների և թէ զանազան
գործերի վերաբերութեամբ: Թիֆլիսի օրի-
նակին անկասկած կը հետեւեն և մեր միւս
քաղաքները, որտեղ, ինչքան մեզ յայտնի
է, անանուն զրպարտութիւնների և ան-
ստորագիր մատուցութիւնների սխառմը շատ
զարգացած է:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԱՋԱՆԸ ԴԵՌՈՒՄ ՄԵՆՈՒՄ Է

Չորս տարի առաջ, 1894 թ. ամառը, Սև
ծովում խորտակվեց «Ալադիմը» չորհրդաւ,
բաղաժնիւ ճանապարհորդներ թաղելով ծովը
խորքերում: Այդտեղ պատմութիւնը զարթոնել
էր. բայց նրա մէջ կար մի վերին ատրիանի
վրդովեցուցիչ, զոյնիւ հանգամանք. դա այն էր,

եղանակաւ կաթոլիկոսական ընտրելներու
ցանկ մը պատրաստել տալով ուղարկած էր
կայսերական պալատ: Այս կեղտոտ ցանկին
զարկել հոտն անցեալ օր յանկարծ տարած-
ւեցաւ պատրիարքարանի մէջ. պատրիարք ու
ժողովներ իրար անցան, երթուղաւ շտապաւ,
այսօր ճառեանի ապարանքը, վաղը Նորատու-
կեանի խորհրդարանը, միւս օր ալ զօկտօր
Ստեփան փաշայի դեղարանն՝ այս վերջինն մէջ
անշուշտ պատրաստել տալու իրենց purgatif
մը՝ մարսելու համար եկած պետական վերջին
վճարական թէ գէ էր է՛հ... բայց ինչ օգուտ...

Այս թէ գէ էր է՛հ կցուած էր եռանուն
ցանկ մը Ազանայի ցանկին հանուած: Յանկին
գլուխն էր անցեր Մեքսիկոյի եպիսկոպոս Մու-
րադիան, որուն կը հետեւէին Ալեքեան և Բար-
թոլիմէն և ֆէնդիւնները:

Բ. Դուռը, սուլթանին իր աղէին համա-
ձայն, կաղաքաբեր պատրիարքին՝ թէ նորին
կայսերական վեհախառութիւնը կը պահանջէ որ
այն երեք եկեղեցականներէն մէկը լինի կաթո-
լիկոս ճանն Կիլիկիոյ, թէ պատրիարքարանը
պէտք է, որ երեքէն մէկը ջնջէ և մնացած եր-
կու անուանուի: Դուռը զրկէ, անմիջապէս
ներկայացուելու համար սուլթանին՝ որ այն
երկուքէն մէկը նշանակէ կաթոլիկոս, թէ՛
Սիւր սիսեցիներուն լինելով, Բ. Դուռն երբեք
չընդունիր, որ պատրիարքարանը միջամտէ անոր
ընտրական գործերուն և ոչ ալ իր կողմնէ
ընտրութեան գործադիր պաշտօնեայ մը նշանա-

յո օրհասական բողոքներում ուժեղները թողնելին
չէին պաշտպանում, չէին ազատում մահվան բե-
րանից, այլ, ընդհակառակը, իրանց ազատելու
համար աշխատում էին զրկել խեղճերին պաշտ-
պանութեան վերջին միջոցներից, խեղճում էին
նրանց, որպէս զի իրանց ազատվելու: Այդ հան-
գամանքը ցոյց էր տալիս մարդկային բնավորու-
թեան ամենամուսայ, մութ և անտանելի կոզմե-
րից մէջը. աղէտի ժամանակ մարդը կորցնում է
իր նմանին օգնելու ընդունակութիւնը, մոռա-
նում է ամեն ինչ և միայն իրան է տեսնում,
այնքան սարկանում է իր «եսին», որ նոյն իսկ
զապանային անարտուղեմը ուրիշին զոյում է
մահվան ճանկը, որպէս զի իրան ազատէ...

Փորձելով գտնել այդ զապանային յատկու-
թեան արմատը, մենք գուցէ այն եզրակացու-
թեան հասնենք, թէ խորտակված նաւի ճանա-
պարհորդները կուտորական զարգացման ստոր
ատրիանի վրա կանգնած լինելով, չէին կարող
միանգամից բաժանվել այն հակուսներից, որոնք
յատուկ են վայրենիներին: Մենք սիրում ենք
հաւատալ, որ մարդը որքան առաջանում է ժա-
մանակակից գիտութեան ճանապարհով, այնքան
նա աւելի մոտենում է ալտրոիտական զապա-
նարին: Այդ տեսակետից մենք չէինք էլ ուզի
համեմատութիւն դնել, օրինակ, ասիացու և եւ-
րոպացու մէջ: Մենք դիտեմք, որ եթէ մի էսկի-
մօս և մի անդլիպիս ճանապարհորդելիս նկա-
տեն մի խեղճվող մարդ, պէտք է որ անդլիպիս
առաջ նետով մեռնողին ապաւնուի, մոռանալով
իր անձը, ոչինչ համարելով այն դժուարութիւն-
ները, որոնք կանգնած են այդ «մեծագործու-
թեան» ճանապարհին:

Բայց այդպէս է:
Նորերում, ինչպէս յայտնի է հեռագրներից,
խորտակվեց ֆրանսիական առաւելեան չորհրդաւ
«Bourgeois»: Զոհերի թիւը այժմ անհամեմատ
շատ էր: Բայց այս աղէտի ժամանակ էլ երևան
եկաւ նոյն հանգամանքը, որ այնքան վերջուկեց-
նում էր մեզ 1894 թ. ամառը, Սև ծովի աղէ-
տի ժամանակ: Փրանսիական չորհրդաւ ճանա-
պարհորդները մեծ մասամբ ֆրանսիացիներ և
ամերիկացիներ էին, ուրեմն պատկանում էին
այն քաղաքակրթութեանը, որոնք նոր չը պի-
տի սովորեն թէ ինչպէս զապանում են մարդը
զապանից: Ինչ արին նրանք աղէտի ժամանակ:
Այնպես չորհրդաւ պատմում են, որ նաւատորմը
մակոյկից դուրս չարեցին Բիւրժէ ճանապար-
հորդին նրա պառաւ մօր և երեխաների հետ ու
թիակներով ջրառոյղ արին նրանց: Երեխաները
և կանայք զապանաբար ջուրն էին զցլում: Ա-

կէ, և եթէ այս անգաման համար քաղաքա-
բար կընդունի, որ Նյուիամքի եպիսկոպոսներուն
վրա լինի ընտրութիւնը, պատճառն ան է, որ
Սիւր մէջ արժանաւոր եպիսկոպոս մը չի կայ
առայմ:

Պատրիարքն, յետ երկար խորհրդակցութիւն-
ների, վերջապէս կը ստիպուի խառն ժողով
զուտաբեր: Ժողովին մէջ կարգադրութիւն Բ. Դուռն
թէ գէ էր է՛հ, կրօնական ժողովոյ անդամներէն
Վահրամ եպիսկոպոս պատրիարքին կարծիքը
կուզէ առնուի, բայց պատրիարքն՝ այս խնդրին
մէջ, սկիզբէն մինչև վերջը, չէզոք մնացած լի-
նելը (?) կը յայտնէ և կառաջարկէ, որ ամենա-
պետ սրբազան Գրիգորին եպիսկոպոս Յօաննէ-
սեան խօսի. սա ալ իր բովանդակ պաղարիւ-
նելով, որ խօսեմ, ես արդէն այս մասին
իմ խօսելը խօսել ընդունելով եմ, միշտ ըսած
եմ թէ պէտք էր բեկանել նախորդ ընտրութիւ-
նը, սակայն դուք բեկանեցիք և անս անց եղաւ
հետեւեցն. ուրեմն մենք զանկ կուզեմք լսել
հիմա: Օրմանեան պատրիարք, յուզուած, այ-
լալած, զեղնած ու քիչ մ'ալ կըրտու, վերջապէս
կը բռնայ իր բերանն և այս խնդրոյ համար
իր և պալատի միջև սկիզբէն ի վեր եղած
բանակցութիւնները կը պարզէ պերճախօս լեզ-
ւով մը. կը յայտնէ թէ ինչպէս իւրաքանչէր էին
զինքը, թէ ինչպէս շլացեալ էր իրեն տըր-
ւած խոստումներէն, և թէ կը զգայ
ուր ուրեմն թէ անապոքին է հարուածը, վտան-

զատվածներից շատերը վերադարձած էին դա-
նակներով: Արանք հեռագրական համառօտ տե-
ղեկութիւններ են, երևի նրանց շատով կը հե-
տեւեն աւելի մանրամասն նկարագրութիւններ,
որոնք մարդկային թշուառութեան դարձուցիչ
պատկերի մէջ առանձին զուգելի գոյներով կը
նկարեն երեխաներին և կանանց խեղդողների
զապանութիւնները:

Սակայն եղած տեղեկութիւններն էլ բաւական
են ապացուցանելու, որ զապանը կենդանի է
մարդու մէջ առհասարակ, չը նայած քաղաքա-
կրթութեան այն աստիճանին, որին նա հասել
է: Ի հարկէ, սա նոր լոյս եկող փաստ է, իւրա-
քանչիւր տարի երևան են գալիս հարիւրաւոր
գէպեր, որոնք մի և նոյն բանն են հաստատում:
Վեանք մէջ աւելի բազմաթիւ մանր գէպեր
մնում են առանց յիշատակութեան: Բայց «Bour-
geois» նաւի արկածը, ինչպէս և առհասարակ
ամեն մի ցնցող գէպը, նորից այն միտքն
են ծագեցնում, որ դժբախտութիւնը այնքան
մարդկային թշուառութիւնը չէ, որքան այն, որ
մարդը հաղաբար կարելի ընթացքում չէ կա-
րողանում խեղճել զապանը իր մէջ: Եւ դեռ որ-
քան պիտի ժամանակ անցնէ, որ վերանայ այս
մեծ դժբախտութիւնը:

ԿԱՑ ԵՒ ՄԻ ԱՅՆ ՄԻՋՈՑ (Նամակ Խմբագրութեան)

Վերադառնում ենք եկեղեցական ժողովներ
գումարելու առաջարկութեան, որի մասին խօսք
կար «Մշակին» № 112-ի մէջ, և կը փորձենք այդ
առաջարկութիւնը կապել քաջանայական
հարցի մի կարեւոր կողմի հետ:

Մենք անդադար լսում ենք յուսահատական
զանգուանք, թէ այժմ, երբ տղէտ և անարժան
քահանաների թիւը աւելի հատիկների չափ չա-
տացել է, երբ բոլոր տեղերը բռնված են և ար-
ժանաւորների ու ուսեպանների համար այլ ու ոչ
մի առաւել չէ մնացել, միանգամայն տաւերդ
է դադարել քահանայական հարցով, խօսել և աշ-
խատել կրթված քահանաներ ուսեպանու մասին:
Ընդունելով մի քանի, ասում են շատերը, որ
Ելմիածնի վերջապէս խեղճ եկաւ, որ այժման
թէժիւր փոփոխել և դուրս եկաւ բոլորովին հա-
կառակ տեսակի Արչէն երէց, որ փոխանակ
պաշտպանելու տղէտ երէցների ձեռնադրութիւ-
նը, սկսեց դատաւարտել նրանց և քարոզել,
որ անպատճառ կրթված և ուսեալ անձինք քա-
հանայ ձեռնադրելու են: Ներկայումս մի
քանի, որ լսելով այդ նոր առաքել է հա-

զաւոր է ապագան, և, առանց ուշադրութիւն
լսելու ժողովոյ մէջ պատահած թեր ու դէմ
խօսքերու կորույէ Դուռն թէ գէ էր է՛հ, որ
վերջնական պատասխան մը՝ մերժելով խաղա-
կեղծ առաջարկը, ինչպէս և կը գրուի ու կը
խրկուի՝ հակառակ պարագային հրաժարելու
սպառնալիքով:

Պատրիարքական թաքրիւրին վրա պալա-
տական Սալէր (Թիֆլիսպալ) մը կուգայ պատ-
րիարքարան, և սուլթանին բարենեւն Օրմա-
նեանի գողը թափելով կը հարցունէ՝ թէ ինչ
չարժաւոր կար հրաժարելու, թէ, չնորհիւ ա-
ռատագրութիւն սուլթանին, մինչև հիմա ազդին որ
գործն ետ մնացել էր, և թէ նորին սրբապետ-
ութիւնն ինչպէս և կը հաճէր որ Կիլիկիոյ
խնդիրը կարգադրուէր (!): Տակաւին
յայտնի չէ թէ պատրիարքն ինչ պատասխանե-
ր է և գործն ինչպէս պիտի վերջանայ, միայն թէ
չնտ մօտ է ժամանակին և Օրմանեան պատ-
րիարք պիտի ստիպուի ողբերգի մը յօրինել իր
անցեալ պաշտօնավարութեան վրա՝ յորդորակ
դիմելով իր ցաւալի ողբերգին սա ճշմարտութիւ-
նը՝ թէ—տաճիկը իրեն պէս զեռ շատ եր
կը խաբէ:

Մինչդեռ պատրիարքարանի չուրչն այս դերերը
կը կատարուին, անդին Ալեքեան իր աշուղդ
կը նետէ և Բարթոլոմէոս իր դաւերը կը պատ-
րաստէ, քաջ համոզուած լինելով որ՝ Մեքսի-
կոյէ՛՛ միշտ հրաժարելու տրամադիր լինելով,
իրենցմէ մէկուն պիտի մնայ անշուշտ այդ տա-

զինուորի մը հրացանը խելով՝ զինուորներուն առաջնորդեց։ Սպանիացիք ստիպվեցան դուրս գալ իրենց պահած տեղէն և փախչել։ այդ միջոցին ձիւորները իրենց հաշակաւոր նշանաձիւքները մեռած ամերիկացիներ վրէժը լուծեցին։ Մինչև հիմա ծովեզերքի մօտ այս ամենէն մեծ կռիւն եղած է, որուն մէջ ըստին չափ ամերիկացի մեռան և 80-էն աւելի վիրաւորվեցան։ Վիրաւորվածներու մէջ է Նիւ-Յորք-ձորը՝ թերթի թղթակիցը, որ յարձակողներու առաջին գծին մէջ էր։ Սպանիացիք երկու գլխաւորները թէլ մնաց իր յօդուածին, ինչպէս նաև կեանքին վերջակէտը դնէին։ Լրագրի վիրաւոր պաշտօնեան, երբ ինկած տեղէն կը վերցնէին, սկիւր մը խնդրեց իր ընկերներէն և ընկողմանած ծխել սկսաւ։ Նոյն ատեն խնդրեց իր ընկերներէ մէկէն, որ գրէր ձեռք առնէ և չը նայելով իր ստացած ծանր վէրքերուն, պատերազմին ամենէն գեղեցիկ ու կենդանի նկարագրութիւնը գրել տուաւ, թերևս իր գրածներու վերջինը։ Վիրաւորները հիւանդանոց-նաւը փոխադրեցան, ուր ամենէն փափուկ դարմանները և հոգածութիւնը կը սպասէին իրենց կամաւոր հիւանդապահ տիկիններու և օրերըներու կողմէն։

Երէկ պատերազմին դաշտի վրա թաղեցին մեռելները՝ պարզ, բայց սրտաշարժ արարողութեամբ։ Կտաւորները մեռած զինուորներու ցանկը հրատարակեց. քանի մը կորսված զինուորներու գիտնները դեռ չեն գտնվել։ Մեռածներու մէջ էր Նիւ-Յորքի բարձրագոյն դասակարգի պատկանող հարուստ երիտասարդի մը անունը, որ սպանիացի հանդիմանի լրագրի համարներ է պատերազմի դաշտի ներգլխիւնները և փոխանները։

Զոհերու թիւը՝ բաղադրամբ չանուած առաւելութեանց շատ աննշան կարելի է համարել։ Ամերիկացիները մեծ վախ կար թէ սպանիացիք զինուորներու ցամաք ելնելու պիտի արդիւնէ ջանան, թէ և այդ անկարելի էր որ յաջողէր, բայց կրնային մեծ վնաս պատճառել նաւերէն ծովեզերք ելնող բանակին։ Բայց կրնի մարտանաւերու թղթակցութեան շատ օգտակար սարսափ մը մտուցել էին սպանիացիներ սիրտը։ 15,000-էն աւելի մարդիկ երկու երեք օրվան միջոցին իրենց պաշարներով, զէնքերով, ռազմամթերքով, ձիերով և այլն ցամաք ելան, առանց ամենափոքր ընդմիտութեան հանդիպելու։ Ծովեզերքը կրնի շատ անցարժան էր, սակայն առանց մեծ արկածի մը կարելի եղաւ այդ գործը գլուխ հանել։ Ամերիկայի թերթերը մեծ գովաստող կը խօսեն դրաւորներուն և մեքսիկացի-երկրաչափներուն վրա, որոց այս կանոնաւոր գործը ինքնին յաղթութիւն մը կարծէ։ Բանակը ցամաք վրա ուր կրնային ապրիլ հանդիստ չունին եանքի զինուորները, ամեն կողմէ Սանթո-Սպաոյի վրա կը յաւաքանան։ Երբ նկատի առնվի աննշան կրնան, արշաւող բանակին կերակուր հասցնելու դժուարութիւնները, այն ատեն կրնանք ըմբռնել թէ իրաւ պարծենալու իրաւունք ունին մեր բարեկամները։ Տաքութիւնը ըստ Փարէնայթի 100 աստիճանի կը հասնի, ջուրը սակաւ և վատաւոր։ Բժիշկները հրամայած են, որ առանց կանխաւ եռացնելու մարդ ջուր չը խմէ, հրաման մը որ աւելի դիւրին է տալ, քան գործարարը։ Զինուորները շատ կը գանգատին իրենց բոլոր հանդերձներէն և ծանր սպառազանքութիւնէն։ Ներակայեցէ, որ հետեակ մը այդ դժուարին տաքութեան մէջ պիտի վազէ ինքնամոռի ետէ՛ վրան 200 հատ փամփուշտէ զատ՝ ունենալով քանի-քանի առարկաներ։ Այս է պատճառը, որ ծովեզերքէն մինչև Սէվիլլա ամբողջ ճանապարհը ծածկված է, կըսեն, հանդերձներով, բոլոր վերականգնող և այլն և այլն։ Լաւ է որ զինուորները իրենց հրացանը չեն թողուր։

Ամերիկացի զինուորներու հակապատկերը կը կազմեն կուրացի կուռուղիները։ Գարսիայի զինուորներէն շատերը չարիկէն աւելի հանդերձ չունին, գլխիւրաց և բոլորի, դեբուտ պէս կը թռչեն աւելի՛ քան կը վազեն, կը սողան անստաւոր մէջ առանց չշուկի, դարձանի նստող թշնամին կը լրտեսեն և առանց նկատվելու ետ կը դառնան։ Այդ ճարպիկ քուպայիներէն մեծ օղտու կը բարեն ամերիկացիք, երկրին ծանօթ, կրնային վարժված ամեն բան կրնան ընել։ Ծերունի ընդպացի հերոսը 7000 այսպիսի մարդիկ ունի, որոնք ամերիկեան հրացաններով զինուած և որ աւելի է՝ ամենէն կատարել վրէժ-խնդրութեամբ վառված՝ կը պատրաստվին վերջին հարուածը տալու սպանիացիներ։

Այսպէս, 20,000-էն աւելի մարդիկ կան դորապետ ԵՖֆըրի հրամանին տակ։ այնքան և թերևս աւելի սպանիացիներ կան։ Զինքերու առաւելութիւնը ամերիկացի կողմն է ընկալանարար,

երկու կողմն ալ հաւասար քաջութեամբ պիտի կռուին, թէ և արդիւնքը առաջուց յայտնի է։ Ամերիկացիք յապարդութեամբ երթողներն այն դաւաճարը ունին թէ եանքի ցամաքային զինուորը երթողները զինուորէն շատ ստորին է, սակայն այս երկու-երեք օրվան թերթի կռիւները իսկ բաւական են ցոյց տալու թէ կամաւորը ու է զինուորի հաւասար է, եթէ ոչ դերազանց իր քաջութեամբ։ Նորուորաւ քաղաքին քով սպանիացիք չոգեկտորի տեղաշարժ մեքսիկայ մը աւերեցին, որ թշնամին զայն չը գործածէ։ ամերիկացի հասարակ զինուորներ զայն մի քանի ժամէն կարգի դրին և երկաթուղին վրայէն տարին պաշար բերելու։ Այս ցոյց կուտայ կամաւորներու մեքսիկական ճարտարութիւնը, սպանիացի անուա երկրասարդ զինուորներու անփորձութեան դէմ։ Կամաւորները թերևս կրթեալ զինուորներու ճշգրտութեամբ և կոյր հաղանդութեամբ չը կըսէին, որովհետեւ ամեն մարդ իրեն յատուկ խելը ունի, երբեմն կոյր հաղանդութիւն անհրաժեշտ պայման է զինուորական յաջողութեան, բայց շատ աւելի ստեղծ խելացի և տրամաբանող հասարակ զինուորը կրակի մէջ նետով անխորհուրդ պատերազմողին լաւ կը յաջողի։ Ամերիկացիք կըսուող մեքսիկացիներ չունին, կըսէ թերթ մը, բայց խորհող մարդիկ, որոց ամեն մէկը զիտէ թէ ինչ նպատակի համար կը կուռի և թէ ինչ է իր պարտքը։ Ցառաջիկայ մի քանի օրերը կարելի է փորձով հասկցուի թէ որքան ստոյգ են այս ըստածները։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒԻՐԵՐ

— Կրեմլի ազգային ժողովը իր հաւանութիւնն է տուել եւրոպական ծովակալներին մշակած նոր ծրագրին։ Ծովակալները որոշել են մշակել մասնաւորաւոր ջրէկան, քաղաքական և առևտրական օրէնքներ կղզու համար և հրաւիրել են Յունաստանից երեք իրաւագէտ։ Իսկ սուլթանը իր դեսպաններին միջոցով բողոք է յայտնել անգլիական, ֆրանսիական, ռուսաց և իտալական կառավարութիւններին այդ ծրագրի դէմ, ասեւով որ կրեմլական ազգային ժողովը մի ապօրէն հաստատութիւն է և մեծ պետութիւնները պէտք է խորհրդակցեն Բ. Դրան հետ կրեմլական հարցի լուծման համար։

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԻՌԵՆԱՅ ԳՐՈՒԹԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՄԵՐԻԿԱ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՊԼԱՅԱ-ԳԵԼ-ԷՍԵՆ, 2 յուլիսի։ Շափուէրի պահանջին՝ անպայման անձնատուր լինելու, Տարալ կրկնեց, թէ վճառ է յամառութեամբ դիմադրել։ Այնու ամենայնիւ, ամերիկական բաւարարները չը վերսկսեցին ուժաւորութիւնը։

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 2 յուլիսի։ Դէյ յայտնեց, թէ խաղաղութեան վերաբերմամբ ոչինչ առաջարկութիւններ չեն եղել։

ՍԻԲՈՆԷ, 2 յուլիսի։ Կիրակի և երկուշաբթի նաւատորմը ուժեղացում էր Սանտո-Նապոլի։ Մի և նոյն ժամանակ ցամաքային զօրքը մօտեցաւ և դուրս քշեց սպանիացիներին վերջին ամրութիւններէ։ Ապա կրակը դադարեց։ Շափուէր պարզապէս օրերուց Երթուրի մօտ, շատ նացոյց անելով ամերիկական ուժաւորութեան աջողութեան վրա և այն բանի վրա, որ Սանտո-Նապոլի ամեն կողմից չքայալաւով է, և հաղորդեցով, որ Էլ-Կանէի 18,000 փախտականները մեռած են սովից, որովհետեւ ամերիկացիները չեն կարող նրանց կերակրել։—Շափուէր պահանջեց քաղաքի անձնատուր լինելու։ Տարալ պատասխանեց, թէ ինքն պէտք է Մարդիկից հրահանգներ խնդրէ։

ԼՕՆԻՊՈՆ, 2 յուլիսի։ Կուբայից և Պորտո-Րիկոյից սպանիացիներին կատարելապէս հեռանալը կը լինի ամենապակաս պահանջը, որի հիման վրա ամերիկացիները կը համաձայնվեն բանակ-ցութիւնները սկսել՝ պատերազմին վերջ տալու մասին։

ՄԱԳԻՐԻ, 2 յուլիսի։ Երկու կողմից հրացանաձգութիւնից և թնդանթաձգութիւնից յետոյ, Սանտո-Նապոլի բարձրացրեց սպիտակ դրոշակ։ Այդ գործողութեան նպատակը յայտնի չէ։ Հաւատարմութեամբ են, թէ սպանիացիները հեռացան քաղաքից։

ՊԱՐԻՉ, 1 յուլիսի։ Մինիստրները խորհրդում վճռեցին դատի ենթարկել Պիկարին՝ օտար անձանց հաղորդելու համար այն դժուարութիւնը, որ վերաբերում է ազգային պաշտպանութեան և փաստաբան Լէրուային—համախոհութեան համար։

ՇԱՆԳՀԱՅ, 1 յուլիսի։ Զօռն-Յզինից հեռագրում են։ Ապստամբները յարձակվեցին բողոքական և կաթոլիկ միսիոնարի վրա Շուա-Չի-Փուի մէջ և շատ վնասներ հասցրին Իւզն-Չի-Նուսի և այլ մեքսիկաց քաղաքներում։ Ֆրանսիական քահանան գերի է վերցրված։ առաջակները պահանջում են 10,000 տուէլ փրկաւր։ Տեղական շատ ընտելիներ սպանված են։ շատ կայքեր ոչնչացրված են։ Հիւպատոսները Զօռն-Յզինից անցան Ալէքսոս նաւը։ Զօռն-Յզին բաղադրում հանգստութիւն է տրուում։

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 1 յուլիսի։ Գերմանական Շարլոտա նաւի Պետերբուրգ գալը։ Երբ նաւը եկաւ, կապիտան Վիլհելմ պաշտօնական այցելութիւններ գործեց ծովապետ Ալէքսանդր, Պետերբուրգի կամենդանտ Ալէքսանդր, փոխ-ծովապետ Իլէյմիւրով, քաղաքապետ Կլէյմիւրով, գերմանական դեսպան Բարդիմով, որոնք անյայտալ փոխադարձ այցելութիւններ տուին նրան։ Շուտով գերմանական նաւն այցելեց դեսպանին։ Գալու օրը քաղաքապետը տուեց կապիտանին իր օթեկանները քաղաքից դուրս գտնվող թատրոնների համար։ Հետեւեալ օրը հրամանատարը և օֆիցերները ունեցողութեան ընդունվեցին Մեծ Իշխան Ալէքսէյ Ալէքսանդրովիչի մօտ։ Մեծ Իշխանը ուղարկեց իր աղիւտանաւ ծովապետ բարոն Երկրիկին փոխադարձ այցելութեան։ Երեկոյան գերմանական դեսպանի մօտ ճաշ կար։ Երեկ օֆիցերները կապիտանի հետ անուղեցին Էրմիտաժի և ձմեռային պալատը։ Երեկոյան Շարլոտայի ծովապետներին ընդունեց գերմանական կողմից իր կողմում Այսօր Շարլոտա նաւի վրա հրավրված են նախաճաշի գերմանական դեսպանը դեսպանութեան անդամներին հետ միասին, բարաբարական դեսպանը, Ալէքսան, Կլէյմիւր, Ալէքսան, ծովապետ Երկրիկ։ 3 ժամին թէյ է հրաւիրված գերմանական կողմից տիկիններին հետ, որից յետոյ նաւի վրա պարահանդէս կը լինի։ Գերմանական ծովապետները ամեն տեղ սիրալիւ ընդունվելու լինին են գտնում։

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 67 տիրած առաջին փոխառութեան ՆՈՆ սերիաների։ 3524, 9799, 12533, 4807, 19876, 17123, 12868, 12094, 1599, 7, 258, 11982, 13758, 11655, 19290, 2863, 17548, 10984, 8973, 6048, 17425, 14954, 14412, 7850, 2972, 8156, 1227, 15165, 14518, 7962, 15321, 16349, 9633, 153, 5090, 2713, 3764, 12425, 4235, 16190, 5113, 18856, 6450, 1243, 13333, 4537, 3801, 10807, 13106, 18493, 609, 1183, 14841, 11047, 18575, 4925, 13676, 3680, 18026, 6942, 4454, 10983, 19202, 7359, 4348, 4109, 11658, 14137, 3698, 7644, 5944, 4453, 3818, 19076, 16004, 11504, 6992, 3528, 11861, 4561, 14328, 13862, 5818, 690, 10463, 16797, 17848, 6371, 19584, 2792, 6474, 11459, 5629, 10866, 2801, 15489, 6445, 19674, 2963, 1435, 493, 9798, 10055, 10058, 19158, 5580, 13088, 17643, 12998, 19463, 792, 7529, 3930, 8117, 155, 6566, 15361, 15056, 16955, 5689, 8747, 1142, 11713, 3226, 3740, 7994, 6853, 854, 19938, 18718, 19696, 14977, 17242, 15539, 1855, 18041, 13255, 1192, 14638, 13915, 17612, 16150, 9860, 15625, 10167, 5613, 16786, 3176, 11651, 18167, 3949, 18594, 5014, 1144, 2860, 4005, 13490, 18034, 1707,

ԹԻՖԼԻՍԻ ԲԱՂԱՔԱՅԻՆ ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Հրաւիրում է ցանկացողներին կապալով վերցնել հին երեք-յարկանի տան քանդելը, որ պատկանում է Թիֆլիսի Փաղաքային Կրեդիտային Ընկերութեան, և որը գտնվում է Թիֆլիս քաղաքի 5-դ քաղաքամասում, Պուլկինայայ փողոցի վրա։

Այդ կապալը վերցնել ցանկացողները յայտարարութիւններ կընդունվեն Ընկերութեան Վարչութեան մէջ այն 1898 թիւ յուլիսի 8-ին, մինչև յերեկվայ 12 ժամը։

Այդ կապալը վերցնել ցանկացողները պարտաւոր են դրաւոր յայտարարութիւններ տալ որոնց մէջ պէտք է նշանակված լինի այն վերը, որով նրանք համաձայն են յանձն առնել թէ հին շինութեան քանդելը, ղէն անկող շինութեան անպէտք աղբը աշխատանքի տեղից, նոյնպէս և մասնացոյց արած տեղում քարեայ և փայտեայ նիւթերի փոխադրելը և դարսելը։

Իսկ եթէ շինութիւնը քանդելու և աղբը ղէն անկող պայմանները կատարելու ժամանակ կապալառուն կը ցանկանայ անբողջ նիւթը ինքն վերցնել, այն ժամանակ նա պէտք է յայտնի թէ այդ բանի համար որքան նա համաձայն է վճարել Կրեդիտային Ընկերութեան։

Աճորդի հաստատելը կախված կը լինի Ընկերութեան Վարչութեան և Վերատուող Կօմիտետի Միացեալ Ատենից։

Մանրամասն պայմանները կարելի է տեսնել Ընկերութեան վարչութեան մէջ ամեն օր, բացի տօն և կրակի օրերից, առաւօտեան 9 ժամից մինչև 1 ժամը կէսօրից յետոյ։ 1—1

ՎՐԱՍԱՏՆԻ ԵՒ ԻՄԵՐԵԹԻ ՀԱՅՈՑ ՎԻՃԱԿԱՅԻՆ ԱՏԵՆԻ

մէջ նշանակված է անուրը 3 յուլիսի այս տարվայ, առանց կրկնաձրգի, կապալով տալու Էյմիաճին տունը իր խանութներով, որ գտնվում է Պուշկինեան փողոցի վրա։ Աճորդին մասնակցողները պէտք է ներկայացնեն զրաւական, իսկ պայմանների մասին կարող են տեղեկանալ Կոնսիտորիայի ղրւանատանը։

3—3

2779, 7874, 12044, 19532, 15177, 7739, 6080, 17491, 7888, 12699, 15716, 9875, 1171, 2615, 8464, 1088, 13239, 587, 12201, 13220, 17970, 14104, 5803, 8963, 8712, 10125, 1986, 5747, 19800 15441, 3076, 10754, 13819, 13564, 8373, 8380, 1091, 15528, 2770, 9781, 16104, 1524, 10069, 4020, 15181, 6469, 19884, 4263, 18963, 6054, 9249, 5369, 14387, 13037, 14956, 15913, 14802, 14196, 3053, 9204, 18929, 1594, 15879, 9726.

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԻԿԷԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՐ ՀԻՒԱՆԳԱՆՈՑ Բ. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆԻ

(Կուկիա, Վարդգիս արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կրակի օրերից։

Ա. Ռ. Ա. Ռ. Ս. Ն. Բ.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—11—12 ժ. վիրաւոր-
ծութեան, վնասակար (օրֆիւրի) և միլիտան. հ.
Կ. Մ. ԶԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և ներարդային հ.

ԿԻՆ ԲԺԻՇԿ Ա. Ի. ԲՈՒԿԵՆԿՈ—10 1/2—11 1/2 ժ.
կանանց և երեխայից հ., ծաղիկ պատուա-
տուան։

Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆ—11 1/2—12 ժ. կա-
նանց հիւանդ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և
երեխայից հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1 1/2—2 1/2 ժ. ներքին, և մի-
լիտանական հ. ականյի, կրկնորդի և քիթի հ.

Ե. Բ. Կ. Ն. Բ.

Վ. Մ. ՄԱԽՈՎԻՍԵՆ—6—7 ժ. ներքին և երե-
խայից հ. ներարդային և մարմնի հ.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ—6 1/2—7 ժ.

Տ. Ի. ԲՈՒԿԵՆԿՈ հիւանդանոցում քիմիական
և խոշորացուցական հետազոտութիւններ է ա-
նում մէկի, խիթ, արեան, կաթի և այլն։
Վճար 50 կ. քաւորները ձրի։ Համախորհրդի
(Կոնսիտորիայի) և օպերայիայի համար առանձին
Հիւանդանոցի վերատեսուէ՝
141—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԳԵԱՆ

ՀՐԱՏԱՐԱԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լոյս տեսաւ.

Գ. Է. Բ. Ե. Ս. Ի.

ՄԱՐԴԵՍ

(Homo sum)

Վ. է. Կ. Ե. Գերմաններին քաղաքից թարգմանեց
Սոմ. Մախառանց

428 Երևոյ Գինն է 1 բուրձի Գինի Կիֆլիս.
Армянское Издательское Общество. 2—3

Մի երկուստարը ուղում է մասնաւոր դա-
սեր ունենալ ֆրանսերէնից Թիֆլի-
սում կամ ամառանոցներում։ Գինը Ներսիսեան
ուսումնարան, 12—1 ժամ։ 2—3

ՄԻ ՎԱՐՉՈՒՆԻ

ՈՐ ԳԻՏԷ. ՖՐԱՆՍԵՐԵՆ ԵՒ ՄՈՒՋԻԿԱ, կամե-
նում է վարել կոմպոզիտուրա և կամ դաս-
տիարակչուհու (գուկլերմանտկա) պաշտօն, մի կամ
երկու ազգկայ մօտ։ Համաձայն է հեռանալ քա-
ղաքից։ Հասցէն։ Лабораторная, № 5, д. Цурино-
ва, спросить учительницу. 4—6

Մ. ՄՈՒՐՏԱԿ

Ամառս մտադրե է մնալ Թիֆլիսում և ԱՆԳԼԻՆ-
ԲԷՆ լեզուի դասեր տալ իր տանը,